



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

“ 13 ” փետրվարի 2026 թվական

N 320 - Ա

ք. Երևան

**1043 «ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ
ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ԾՐԱԳՐԻ «11004 ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ԵՎ ԾՐԱԳՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման 14-րդ կետի «ա» ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

- 1) 2026 թվականի 1043 «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի «11004 Տեխնոլոգիական կարողությունների և հմտությունների զարգացում» միջոցառման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելված 1-ի,
- 2) Ծրագրի 2026 թվականի ֆինանսական միջոցների բաշխվածությունը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանին:

2/13/2026

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047



ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

«11004 ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ

Բովանդակություն

Հիմնախնդիր	3
Ծրագրի նպատակ	3
Ծրագրի նկարագրություն	4
«Մասսայական ուսուցում» բաղադրիչ	4
«Գործնական հմտությունների կատարելագործում» բաղադրիչ	4
«Կարողությունների զարգացում» բաղադրիչ	5
«Հայ-հնդկական SCS ուսումնական կենտրոնի գործունեության ապահովում, SS դասընթացների կազմակերպում» բաղադրիչ	5
«Ծրագրերի և միջոցառումների հանրայնացում» բաղադրիչ	5
Ծրագրի սկզբունքները	5
Ծրագրի 2026 թվականի ֆինանսական միջոցների բաշխվածություն	7

«11004 Տեխնոլոգիական կարողությունների և հմտությունների զարգացում»

միջոցառման ծրագիր

Հիմնախնդիր

Ծրագրի մշակման հիմքում ընկած են ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման հավելվածի «2.3. Բարձր տեխնոլոգիաներ» մասով սահմանված նպատակները, որոնց համաձայն՝ ՀՀ կառավարությունը շարունակելու է նպաստել նորարարական համակարգի զարգացմանը և տարբեր ոլորտներում դրա համակողմանի ներդրմանը:

Ոլորտային վերլուծություններն ու գործնական փորձը ցույց են տալիս, որ Հայաստանում առկա է տեխնոլոգիական հմտությունների պահանջարկի և առաջարկի անհամապատասխանություն, ինչպես նաև սահմանափակ են շարունակական վերապատրաստման, վերաորակավորման և կիրառական գիտելիքի զարգացման հնարավորությունները, ինչն իր ազդեցությունն է թողնում նորարարական համակարգի և, ընդհանրապես, բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացման գործընթացի վրա:

Այս համատեքստում առանցքային և նշանակալի դեր ունի տեխնոլոգիական կարողությունների և հմտությունների զարգացումը՝ ոլորտում տեխնոլոգիական կրթության որակական և քանակական բարելավման, տեխնոլոգիական ընկերությունների և բուհերի արդյունավետ համագործակցության խթանման, նոր մասնագետների պատրաստման և այլ ոլորտների մասնագետներին վերամասնագիտանալու հնարավորության ընձեռնման միջոցով:

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակները բխում են Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ռազմավարական առաջնահերթություններից, մասնավորապես՝ նպաստել մարդկային կապիտալի զարգացմանը:

«Տեխնոլոգիական կարողությունների և հմտությունների զարգացում» միջոցառման նպատակներն են՝

- բարձրացնել տեխնոլոգիական գրագիտության մակարդակը Հայաստանում՝ համապատասխան թիրախային խմբերի շրջանում՝ ժամանակի պահանջներին համահունչ,
- աջակցել տեխնոլոգիական ընկերություններին,
- կատարելագործել ՀՀ պետական և ոչ պետական բուհերում սովորող ուսանողների գործնական հմտությունները՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն ապահովող ուսումնական հաստատությունների, ինչպես նաև տեխնոլոգիական կենտրոնների հետ համագործակցությամբ, տեղական և միջազգային շուկաների պահանջներին բավարարող մասնագետների պատրաստմամբ,
- իրականացնել տեխնոլոգիական դասընթացներ:

Ծրագրի նկարագրություն

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև առաջնորդվելով ոլորտի ռազմավարական առաջնահերթություններով՝ Նախարարությունը 2026 թվականին կիրականացնի «Տեխնոլոգիական կարողությունների և հմտությունների զարգացում» միջոցառումը՝ հետևյալ բաղադրիչներով՝

- 1.«Մասսայական ուսուցում»,
- 2.«Գործնական հմտությունների կատարելագործում»,
- 3.«Կարողությունների զարգացում»,
- 4.«Հայ-ինդիական SCS ուսումնական կենտրոնի գործունեության ապահովում, SS դասընթացների կազմակերպում»,
- 5.«Ծրագրերի և միջոցառումների հանրայնացում»:

2026 թվականին Ծրագիրն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսվել է **213 մլն ՀՀ դրամ**:

1. **«Մասսայական ուսուցում»** բաղադրիչի շրջանակում Հայաստանում կկազմակերպվեն տեխնոլոգիական դասընթացներ՝ **արհեստական բանականության, կիրեռանվտանգության, թվային գրագիտության ուղղություններով**՝ ներառելով նաև փափուկ հմտություններ:

Բաղադրիչը կիրականացվի հետևյալ 4 մոդուլներով՝ **Digi Youth, Digi Women, Digi Restart և Digi Business**՝ իրականացվելով համապատասխանաբար երիտասարդների, միջին տարիքի կանանց, տեղահանված անձանց և սոցիալական նպաստ ստացողների, ինչպես նաև՝ փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների համար: Բյուջեն կազմում է **100 միլիոն ՀՀ դրամ**:

2. **Գործնական հմտությունների կատարելագործում»** բաղադրիչի շրջանակում կիրականացվեն «Ռեբրոտների հաքթաթոն» և «Ուսանողական հաքթաթոն» միջոցառումները, որոնց ընթացքում թիմերը կմրցեն իրենց գաղափարներով, նախագծերով և արտադրանքներով, կկիսվեն իրենց փորձով ու գիտելիքներով, ինչպես նաև կստեղծվեն նոր կապեր ոլորտի մասնագետների միջև: Բյուջեն կազմում է **65 միլիոն ՀՀ դրամ**:

3. **«Կարողությունների զարգացում»** բաղադրիչի շրջանակում պետություն-մասնավոր համագործակցության տրամաբանությամբ ֆինանսավորում է տրամադրվելու տեխնոլոգիական ոլորտի կամակերպություններին՝ իրենց ներկայացրած ծրագրերի իրականացման համար՝ վերջիններիս գիտական և/կամ արտադրական ներուժի ավելացման և կարողությունների ձևավորման նպատակով: Նախատեսվում է 2 միլիոն ՀՀ դրամ տրամադրել մրցութային կարգով լավագույնը ճանաչված **15 ծրագրի**, որոնք կարող են ունենալ ինչպես կրթական, այնպես էլ գիտական, արտադրական, լոգիստիկ և այլ ուղղվածություններ: Բաղադրիչի բյուջեն կազմում է **30 միլիոն ՀՀ դրամ**:

4. **«Հայ-հնդկական SCS ուսումնական կենտրոնի գործունեության ապահովման, SS դասընթացների կազմակերպման»** բաղադրիչ:

Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության կառավարությունների միջև 2009 թ. ստորագրված համագործակցության հուշագրի ներքո ձևավորված Հայ-հնդկական SCS ուսումնական կենտրոնի գործունեությունը համակարգում է «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը»:

Հաշվի առնելով Հայաստանում տեխնոլոգիական ոլորտի մասնագիտական ներուժի առաջխաղացման գործում այս կենտրոնի դերակատարությունը և իրականացվող ուսումնական ծրագրերի շարունակականության ապահովման կարևորությունը, ինչպես նաև հիմք ընդունելով վերը նշված հուշագրով ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման

անհրաժեշտությունը՝ կենտրոնի դասընթացները նախատեսվում են իրականացնել նաև 2026-2028 թթ.: 2026 թվականին տրամադրվող բյուջեն կազմում է **13 միլիոն ՀՀ դրամ**:

5. Վերը նշված բաղադրիչների իրականացման շրջանակում նախատեսվում է «**Տեղեկատվության և միջոցառումների հանրայնացում**» բաղադրիչի իրականացումը՝ շահառուների ավելի մեծ ընդգրկվածություն ապահովելու համար: Բաղադրիչի բյուջեն կազմում է **5 միլիոն ՀՀ դրամ**, որը կտրամադրվի մրցութային կարգով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Ծրագրի սկզբունքները

Ծրագրի բաղադրիչների իրականացման ընթացքում հաշվի են առնվելու տարածքային համաչափության, ոլորտային զարգացման, ներառականության, թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքները:

1. Տարածքային համաչափություն

Տարածքային համաչափ զարգացում ապահովելու համար ծրագրի բաղադրիչներ շահառուները կլինեն Երևանի և ՀՀ մարզերի քաղաքացիները, ինչպես նաև՝ տեղի ընկերությունները:

2. Ոլորտային զարգացում

Ծրագրի բաղադրիչներն ուղղված կլինեն ոլորտում տեխնոլոգիական գրագիտության բարձրացմանը և տեխնոլոգիական ընկերությունների գործունեությանն աջակցությանը:

3. Ներառականություն և թափանցիկություն

Ծրագրի բաղադրիչների շրջանակում նախագծերի, ընտրության չափանիշների մշակման և հայտերի գնահատման բոլոր փուլերում կապահովվի մասնագիտական շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, ինչպես նաև հասարակության համար կապահովվի գործընթացի առավելագույն թափանցիկությունը:

4. Հաշվետվողականություն

Ֆինանսական ծախսերի արդյունավետությունը գնահատելու համար պարբերաբար անցկացվելու է յուրաքանչյուր բաղադրիչի շրջանակում իրականացված աշխատանքների մշտադիտարկում՝ միաժամանակ ապահովելով դրանց հաշվետվողականությունը:

5. Ծրագրի ազդեցության գնահատում

Կարևորելով հարկատուների առջև հաշվետվողականության սկզբունքը՝ կատարվելու է ծրագրի բաղադրիչների արդյունքների գնահատում: Գնահատման ընթացքում հաշվի կառնվեն շահառու ընկերությունների, թիմերի և անձանց կողմից գրանցած հաջողությունները՝

արտադրանքի կամ մատուցված ծառայությունների զարգացման և շուկայում հեղինակության ձևավորման առումով:

Հավելված 2

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի

2026 թվականի փետրվարի «13»-ի

թիվ 320-Ա հրամանի

Ծրագրի 2026 թվականի ֆինանսական միջոցների բաշխվածություն

N	Ծրագրի բաղադրիչ	Ընդհանուր բյուջե	Արդյունքային ցուցանիշ	Ընթացակարգ
1.	«Մասսայական ուսուցում»	100 մլն ՀՀ դրամ	Մինչև 800 մասնակից	Դրամաշնորհ
2.	«Գործնական հմտությունների կատարելագործում»	65 մլն ՀՀ դրամ	Մինչև 200 մասնակից	Գնում
3.	«Կարողությունների զարգացում»	30 մլն ՀՀ դրամ	Մինչև 15 կազմակերպություն	Դրամաշնորհ
4.	«Հայ-հնդկական SCS ուսումնական կենտրոնի գործունեության ապահովում, SS դասընթացների կազմակերպում»	13 մլն ՀՀ դրամ	Մինչև 550 մասնակից, մինչև 10 դասընթաց	Գնում
5.	«Տեղեկատվության և միջոցառումների հանրայնացում»	5 մլն ՀՀ դրամ	Մինչև 10 միջոցառում	Գնում
	Ընդամենը	213 մլն ՀՀ դրամ (ներառյալ՝ հարկերը)		